ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 136-Ա

«05» ԱՊՐԻԼԻ 2024Թ

«ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԳԼԱՁՈՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆ ԿԱՐԻՆԵ ԿՈՍՏԱՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 216-րդ հոդվածի, 218-րդ հոդվածի 1-ին մասի, 220-րդ հոդվածի 1-ին մասի, 222-րդ հոդվածի, 223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 224-րդ և 226-րդ հոդվածների, 227-րդ հոդվածի 2-րդ մասի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 13-րդ հոդվածի 1-մասի 4-րդ կետի, «Հանրակրթության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 16-րդ մասի 17-րդ կետի, 17-րդ մասի դրույթներով, հիմք ընդունելով «ՀՀ Վայոց ձորի մարզի Գլաձորի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրության 48-րդ կետի 10-րդ, 21-րդ ենթակետերը, Կ. Կոստանյանի հետ 2022 թվականի մայիսի 30-ին կնքված թիվ 497 աշխատանքային պայմանագրի 2-րդ կետի 2.2-րդ ենթակետի «դ» պարբերությունը, 5-րդ կետի 5.3-րդ և 5.4-րդ ենթակետերը և անհիմն համարելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2024 թվականի ապրիլի 2-ի թիվ 01/15/2302-2024 գրության հիման վրա Կ. Կոստանյանի 2024 թվականի ապրիլի 3-ի թիվ 160 գրությամբ ներկայացված գրավոր բացատրությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Աշխատանքային պարտականությունները ոչ պատշաճ կատարելու՝ աշխատանքային ժամին աշխատավայրից անհարգելի բացակայության և դպրոցի աշխատողների կողմից աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ վերահսկողություն չիրականացնելու, աշխատանքային պայմանագրով ստանձնած պարտավորությունները, աշխատանքային կարգապահության պահպանումը չապահովելու համար «ՀՀ Վայոց ձորի մարզի Գլաձորի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Կարինե Կոստանյանին ենթարկել կարգապահական պատասխանատվության՝ կիրառելով «նկատողություն» կարգապահական տույժը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կ. Կոստանյանին ծանուցելու հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

Recoverable Signature

X

Signed by: KOLYA MIKAELYAN 3507670100

Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ

ք. Երևան